**Արձանագրություն N 2**
ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/7 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 սեպտեմբերի 2017թ
ժամը 09:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ասատրյանը
անդամներ՝ Ն. Հովհաննիսյանը, Ա. Գևորգյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Մասնակցում էր՝ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Դաքեսյանը

**I. Հայտերի բացման մասին**

---

(Ա. Ասատրյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | ***Մասնակիցների անվանումները*** | | ***Մասնակիցների հասցեներ և կապի միջոցները*** |
|---|---|---|---|
| 1 | «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ* | - | Ք. Երևան, Բղրամյան 2-րդ նրբ. 15 տ. Հեռ. 077 27 73 25, megapolistrade2017@gmail.com |
| 2 | «Սմարթլայն» ՍՊԸ | - | Ք. Երևան, Վարդանանց 110, հեռ. 55 84 83, ssmartline@mail.ru |

***մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

բ) Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

| Ապրանքի | | | | Մասնակիցների անվանումները և առաջարկած գները ըստ չափաբաժինների, առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ) | | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | անվանումը | Չափի միավորը | Քանակը | «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ* | «Սմարթլայն» ՍՊԸ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 8 |
| 1 | Աթոռ՝ գրասենյակային, մետաղյա կարկասով | հատ | 11 | 105000 | 74250 | **121000** |
| 2 | Աթոռ համակարգչային | հատ | 11 | 205000 | 155833,33 | **198000** |
| 3 | Լաբորատոր պահարան | հատ | 1 | | 154166,67 | **540000** |

գ/ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/7 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին: Մասնակիցների կողմից ներկայացված՝ բացված ծրարում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը: Բոլոր մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձանաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները և ներկայացրած գնային առաջարկները որոշեց.

ա/ «Սմարթլայն» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար,

բ/ «Մեգապոլիս Թրեյդ» ՍՊԸ-ին 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ չափաբաժինների համար

գ/ առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

դ/ հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ե/ փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 9.30-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 24, 1-ին մասնաշենք, N25 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ասատրյան

անդամներ՝ _____ Ն. Հովհաննիսյան

_____ Ա. Գևորգյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 08 սեպտեմբերի 2017թ.

«ՓԱԲ-ԳՀԱՊՁԲ-17/7» ծածկագրով գնանշման հարձման ձևով գրասենյակային և լաբորատոր կահույքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ասատրյանս, անդամներ՝ Ն. Հովհաննիսյանս, Ա. Գևորգյանս, հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ա. Ասատրյան

անդամ՝ _____ Ն. Հովհաննիսյան

_____ Ա. Գևորգյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան